Տ. ԻՍԱՀԱԿ ՎՐԴ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

Հայ Եկեղեցական ավանդության ամփոփ վերլուծություն. Սոցիալական ինստիտուտն առհասարակ մեծապես առնչվում է մարդկային հոգեբանությանը: Այն ունի իր բազմաթիվ դրսեւորումները, որոնք ինչպես փոխլրացնում են իրար, այնպես էլ մրցակցության մեջ են միմյանց հետ: Սոցիալական ինստիտուտների (լատ. Institutum) դերը, ընդհանուր առմամբ, ընդհանուր-հասարակական շահի պահպանությունն է: Թե՛ սոցիոլոգիան եւ թե՛ հոգեբանությունը հենվում են եւ էմպիրիկ (փորձնական) եւ թե՛ գործնական երեւույթների վրա՝ խուսափելու համար անցանկալի ու անհետեւողական, դիպվածական եզրահանգումներից:

Այնպիսի սոցիալական ինստիտուտներ, ինչպիսիք են ընտանիքը, կրոնը, կրթությունը, գիտությունն ու առողջապահությունը (անկախ արձանագրված ձախողումներից ու ձեռքբերումներից), պարտադիր անհրաժեշտություն են եւ հոգեւոր ինստիտուտի անբաժանելի մասը: Այլ խոսքով՝ անկարելի է երեւակայել մարդկության երեկը, այսօրն ու վաղը՝ առանց վերոհիշյալների: Այլ հարց է, թե ներկայիս աշխարհում ընտանիք ասելիս ով ինչպիսի պատկերացում է ունենում. համատեղ ապրող կին եւ տղամարդ, կին, տղամարդ ու երեխաներ, մարդիկ, որոնք ունեն համատեղ կենցաղավարություն (եւ ոչ թե Ս. Պսակով միացած այր ու կին ամուսիններ), ինչն ինստիտուտի դեֆորմացիայի (աղավաղման ենթարկվելու) խոսուն վկայություն է: Բոլոր դեպքերում մեկ բան եւս առավել քան ակնհայտ է՝ յուրաքանչյուր ինստիտուտ պետք է պատասխանատվություն կրի հանրության ու սերունդների առջեւ: Սա նույնքան ակներեւ է, ինչպես ասենք՝ կրթությունը ծառայում է մարդկության զարգացմանը, կամ կրոնը ենթադրում է համապատասխան սկզբունք ու կենսակերպ եւ այլն:

Եկեղեցին որպես սոցիալական ինստիտուտ. «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես եւ դո՛ք արեք նրանց, որովհետեւ ա՛յդ իսկ են Օրենքն ու մարգարեները...» (Մատթ. Է. 12):

Անհրաժեշտ է նշել, որ Եկեղեցին մի կողմից հանրային կյանքի մաս է կազմում, իսկ մյուս կողմից ներառում է այդ կյանքն ու պատասխանատու է մարդկության հոգեւոր-բարոյական նկարագրի համար (հմմտ. Ծննդ. Բ. 27): Եկեղեցու ուղիղ գործունեությունը հատկանշվում է նախեւառաջ բարոյականությամբ, ինչն իրականացվում է նախ քարոզության միջոցով, որով Եկեղեցին ոչ միայն չի քողարկվում, այլեւ հայտնի կերպով ցուցանում է իր դիմագիծը: Եկեղեցին, բնականաբար, չի ստանձնում ամեն բան, այլ միայն այն, ինչն ավանդված է: Այլ խոսքով՝ Եկեղեցու իրավասությունը գալիս է Քրիստոսից եւ բխում է Ավետարանի ոգուց: Եւ այս ամենն աստվածային շնորհի, ծրագրի ու հայտնության մաս է. այնպես, ինչպես որ Աստված ձեռնարկում է արարչագործությունն ու մարդուն ստեղծելու գործընթացը, ինչը եւս լոկ տեսություն կամ տեսական համոզում չէ, այլ նաեւ համաժամանակյա իրականություն եւ մանավանդ Աստծո սիրո դրսեւորումը՝ ստեղծագործություն:

Անդրադառնալով Եկեղեցուն որպես սոցիալական ինստիտուտի՝ պետք է ասել, որ Եկեղեցու սոցիալական ծառայության վարդապետությունը պատկանում է ոչ թե գաղափարական կամ այլեւայլ ոլորտներին, այլ հենց աստվածաբանությանը (ավելի հստակ՝ բարոյական աստվածաբանությանը): Հետեւապես, Եկեղեցու սոցիալական ծառայության գործառույթն աստվածաբանական բնույթի է՝ հավատքի գործնականացմամբ: Սրանով Եկեղեցին ոչ միայն չի շեղվում իր առաքելությունից, այլեւ փաստացի հավաստում եւ գործնականում հատկանշում է իր հավատարմությունը ստանձնած առաքելությանը (հմմտ. Ծննդ. Ա. 26, Հռոմ. Ը. 19)՝ շարունակելով մնալ աստվածայինի աղբյուր (Հռոմ. Ե. 12, Հովհ. Գ. 12):

Սոցիալական ծառայության վարդապետության միջոցով եւս Եկեղեցին օգնում է իր հավատացյալներին, քանի որ Եկեղեցու սուրբ պարտքն ու իրավունքն է օրինակ եւ ուսուցիչ լինել (Մատթ. Է. 24, Ղուկ. Զ. 46): Եկեղեցին ոչ մի դեպքում չի կարող թողնել իր այս պարտականությունը (հմմտ. Հակ. Ա. 20, Ա. Կորնթ. Թ. 16): Կարելի է արձանագրել, որ այս դիտակետից Եկեղեցու սոցիալական ծառայությունն ու սոցիալական վարդապետությունը որոշ իմաստով հարաբերակցվում, անգամ, նույնանում են, քանի որ երկու դեպքում էլ հարցը հոգեւոր-բարոյական դաշտում է:

Անձի գոյավորման իմաստն ու նպատակը փրկության արժանանալն է, որն էլ Տիրոջն է վերապահված եւ հանձնված է Եկեղեցուն՝ համաձայն բարոյական կարգի (շնորհով ու քարոզությամբ) եւ կրոնական սկզբունքներով (ճշմարտությամբ, արդարությամբ ու ազատությամբ) ջատագովելու եւ զարգացնելու մարդասիրությունն ու առաջնորդելու, պահպանելու անձանց փոխ-

հարաբերությունները՝ պատրաստելու մարդկությանը նոր երկնքին ու նոր երկրին: Վերոբերյալ ուղերձն ուղղված է ողջ մարդկությանը, սակայն այս ամենի (ավանդի) ստացողը (իրավահաջորդը) նախեւառաջ Եկեղեցին է եւ իր հավատացյալը: Ներկա ժամանակներում Եկեղեցին որքան ավելին ներգրավված լինի մարդկային հարաբերություններում, այնքան ավելի դյուրին կլինի հարթել հակասություններն ու դիմագրավել մարտահրավերները, լուծել սոցիալական հիմնախնդիրները:

Հայ Եկեղեցու սոցիալական ծառայությունը. Քրիստոնեության մեջ սոցիալական գործառույթը կապվում է դեռեւս առաքելական շրջանի հետ (իսկ նախասաղմերը երեւան են գալիս Ավետարաններում՝ Մատթ. Ե. 41, Մարկ. Ժ. 45): Առաքելական գործերից եւ թղթերից տեսնում ենք, թե ինչպես ամենատարբեր առիթներով ժողովներ էին հրավիրվում (Գործք Առաք. ԺԵ., Հռոմ. Զ. 4, ԺԲ. 7, ԺԳ. 5, Փիլիպ. Գ. 7): Սոցիալական ինստիտուտն ինքնին ենթադրում է փոխադարձ իրավունքներ եւ պարտականություններ, շարունակական հարաբերություններ, որոնք պատճառաբանված են նպատակներով ու միջոցներով (ընտանիք, ընկերային կյանք, փոխադարձ հարգանք, հավատարմություն): Սոցիալական ինստիտուտը, առհասարակ, այս ամենի համերաշխորեն ներդաշնակումը կամ համախառնուրդն է: Ինչպես ինքը՝ Եկեղեցին, այնպես էլ սոցիալական համակարգը ձեւավորվել է աստիճանաբար: Հետեւապես եկեղեցու ձեւավորմանն ու տարածմանը զուգահեռ առաջացան նաեւ սոցիալական հիմնախնդիրները:

Նույն սկզբունքով նաեւ Հայաստանում, հատկապես քրիստոնեության ընդունումից հետո, տեղ գտած սոցիալ-տնտեսական ու տարաբնույթ հարցերն արտահայտվեցին տարբեր եկեղեցական ժողովներում (Աշտիշատի 354 թ., 365 թ., Արտաշատի 449-450 թթ., Շահապիվանի 444 թ., Սսի 1243-1246 թթ.): Թեեւ մեզանում պատմության ու եկեղեցագիտության մեջ ընդունված է Եկեղեցու ծննդյան, աճման ու զարգացման շրջան նկատել Բ., Գ. եւ Ե. դարերը (գրերի գյուտ, ազգային գիտակցություն, պատմության շարադրություն), սակայն հայոց հայրապետներն ու ողջ եկեղեցականությունը միշտ էլ մտահոգված են եղել սոցիալական գործառույթին առնչվող խնդիրներով: Առանձին ուսումնասիրության առարկա եւ ասվածի վկայություն կարող են ծառայել, զոր օրինակ, Ս. Հովհան Մանդակունու (478-490) եւ Ս. Ներսես Շնորհալու կանոնները (1166-1173 թթ.)՝ աղքատախնամության ու մխիթարության, հյուրերի, կարոտյալների, տնանկների, տառապյալների, հիվանդների ու գերյալների եւ, առհասարակ, հանրային կյանքի ոլորտները կարգավորելու մասին: Առանձին հիշատակման արժանի են Սահակ Պարթեւ, Գյուտ Արա-

հեզացի, Անաստաս Ա. Ակոռեցի, Անանիա Մոկացի, Ալեքսանդր Ջուղայեցի, Աստվածատուր Համադանցի, Աբրահամ Կրետացի, Գեւորգ Դ., Ե., Զ. հայրապետների հայրենավանդ գործերը, որոնց մեր աստվածախնամ ժողովուրդը, դժբախտաբար, լավատեղյակ չէ: Այնինչ, մեր մյուս հայրապետների (Լուսավորիչ, Օձնեցի, Հողոցմեցի, Խրիմյան Հայրիկ, Վազգեն Վեհափառ) կողքին վերջիններս լիիրավ ու ամբողջական կերպով իրականացրել են սոցիալական գործառույթի մեջ ներամփոփվող այնպիսի առաքելություն, որ է՝ հայոց Պետականության ամրակայումը, հաշտեցումն ու համերաշխությունը, հայրենաբնակեցումը, ազգային-ազատագրական պայքարը, հոգեւոր-մշակութային ու շինարարական-կրթական գործունեությունը (երբեմն սեփական ամբաստանության ու կյանքի գնով):

Պետք է նկատել, որ հայրապետական բնավորության ու բնութագրի սույն գիծը եւս առ այսօր շարունակվում է: Այստեղ առանձնակի կերպով ուզում ենք հատկանշել Ներսես Մեծ (353-373) Հայրապետի պարագան: Վերջինս, ամենայն իրավամբ, կարող է համարվել սոցիալական ինստիտուտի հիմնադիրը մեզանում (եւ ոչ միայն մեզանում), քանի որ Ընդհանուր Եկեղեցու եւ համաշխարհային իրականության մեջ, ի դիմաց մեր բոլոր ջանքերի, մեզ չհաջողվեց գտնել գոնե մեկ վկայություն, որը կարող էր հավակնել մատնանշելու, թե հայոց Հայրապետը սոցիալական բնույթի իր սկզբունքները որդեգրել է այս կամ այն օրինակից, եթե ոչ Աստվածաշնչից: Բոլոր դեպքերում տիրավանդ՝ «նեղ դռնով մտնելու» (հմմտ. Մատթ. Է. 13), դիմացինին աջակցելու՝ Հայրապետի որդեգրած սույն վերաբերմունքը մեզանում (եւ մարդկության կյանքում) մեկ անգամ ընդմիշտ դարձավ տիպիկ-բնութագրական ողջ Հայ Եկեղեցու (եւ քրիստոնյա հանրության) համար՝ վերածվելով ազգային դիմագծի եւ գոյավորող ինքնության:

Հայ Եկեղեցու սոցիալական ծառայությունը ներկա ժամանակներում. Եկեղեցին նաեւ ավանդական սոցիալական ինստիտուտ է (Մատթ. ԺԸ. 20): Սոցիալ-հոգեբանական տեսակետից անվտանգության ապահովումը ենթադրում է երեք՝ մարդկային, նյութական ու հոգեւոր (այլ խոսքով՝ հասարակությունը գոյավորող բոլոր ոլորտների) ուժերի ներգրավում՝ հիմնված տեսակետերի ու գաղափարների որոշակի համակարգի, ինչպես նաեւ հանրության մեջ ձեւավորված փոխհարաբերությունների վրա:

Մարդիկ, որոնք պնդում են, թե Եկեղեցին պետք է արդիականանա (որպեսզի հասանելի, հասկանալի կամ ընկալելի դառնա ժամանակին ու եկող սերնդին), ցավալիորեն շփոթվում են. «Տգետը հավատում է եւ զգում է յուր հավատալիքի բարձրությունը. իսկ փոքր-ինչ ուսումն առածը պետք է յուր ուսման համեմատ էլ գիտակցական դարձնե յուր հավատացածը, որպեսզի... յուր չհասկանալու պատճառով ... չստորացնէ վեհը, բարձրը եւ աստվածայինը. այս է ամենայն գիտության հատուկ կամ մասնավոր նպատակը»[1]: Քանի որ նախ՝ այսօրինակ սկզբունքին հետեւելով՝ եկեղեցական կենսակերպն ու կանոնները (որպիսիք ամրագրվել են պատմական փորձառության ընթացքում) մարդուն հարմարեցնելով (ինչը հաճախ հերձվածներին է բնորոշ)՝ մենք բոլորովին այլ ուղղությամբ կընթանանք: Ոչ ոք ավելի լավ չի կարող պատկերացնել այս ամենը, քան ինքը՝ Եկեղեցին (հմմտ. Հռոմ. Ա. 19-21): Ավելի ստույգ ըմբռնելու համար Եկեղեցու ամբողջական խորհուրդը, հարկ է, որ ոմանք լա՛վ ուսանեն, թե ինչ ասել է Եկեղեցի, եթե ոչ այլ բանի, ապա գոնե սրբագրելու համար իրենց սեփական-անձնական պատկերացումները:

Երրորդ՝ Եկեղեցու պայքարը նախ եւ առաջ հենց աշխարհականացման դեմ է: Հայաստանյայց Ս. Եկեղեցին ոչ թե հակառակ է աշխարհայինին... այլ «սոսկ աշխարհայինին, լոկ մարմնականին, միմիայն անցական կյանքին եւ նպատակի միակողմանիությանց»[2]: Իսկ ներկայիս աշխարհում արդիականանալը, նախ՝ աշխարհականանալ, աշխարհականացում է ենթադրում (այնպես, ինչպես որ գլոբալիզացիա կամ գենդեր ասելիս առաջ է գալիս թե՛ բավական լայն դաշտ եւ թե՛ մեկնաբանության անհրաժեշտություն):

Չորրորդ՝ եկեղեցական կամ աստվածաշնչական տեսանկյունից ինքն Աստվա՛ծ ընտրեց մարդուն եւ ոչ երբեք հակառակը (սկզբունքային սույն դրույթը բավական բացահայտ դրսեւորվում է մասնավորապես Հովհաննու Ավետարանում եւ Առաքելական թղթերում):

Հինգերորդ՝ Եկեղեցու առաքելությունը նախ եւ առաջ հոգեւոր է եւ բոլոր մնացյալ գործառույթները՝ Քրիստոսով անհատական ու ընկերային (կամ սոցիալական) հարաբերությունների սրբագրումը, նորոգությունն ու վերափոխումը նախքան Եկեղեցու լրումը, նոր երկրի եւ երկնքի գոյավորումը, սիրո (տեսական ու գործնական առումով) անփոփոխ սկզբունքի կիրառումն են (Մատթ. ԻԵ. 34, Ա. Հովհ. Դ. 8, Բ. Կորնթ.Ե. 1): Բոլոր տեսակի հարաբերություններում անհրաժեշտ է բարոյական օրենքի (Երեմ. ԼԱ. 33, ԼԶ. 26,

1 **Արշակ Տեր-Միքելյան,** Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, Ս. Էջմիածին, 2007, էջ 23:

2 Տե՛ս անդ, էջ 11:

Մատթ. Ե. 43, Հովհ. ԺԳ. 34, Հռոմ. Զ. 4, Եբր. Ժ. 23), (ազնիվ) աշխատանքի կիրառում եւ ջատագովում՝ հասարակական կյանքի նոր հնարավորություններով, երկխոսության ու խոստումնալից հեռանկարների ներբերմամբ (անգամ գաղափարական հակասությունների պարագայում): Բոլոր, այդ թվում՝ սկզբունքորեն տարբեր, օրինակ՝ բարոյականության ու տնտեսության, գիտական ու ազգային բնագավառները բխում են կամ ուղղակի իմաստով Եկեղեցու առաքելության եւ ավանդված սկզբունքի արտահայտություն են՝ երաշխավորությամբ ու (ապահով) հաղորդակցությամբ Աստծո հետ կոնկրետ ծառայական կերպով հեռու պահելու մարդկությանը ցանկացած տոտալիտար գայթակղությունից եւ կամ, այլ խոսքով, Եկեղեցին ամեն (կենդանի Աստծո պատկերով) մարդու մեջ տեսնում է ինքն իրեն (Առակ. ԺՁ. 12, Երեմ. ԻԳ. 5, Ա. Կորնթ. Ը. 11, Հռոմ. ԺԴ. 15):

Ներկա ժամանակներում նկատի ունենալով արդեն վերոբերյալ խնդիրները, ինչպես նաեւ (գրեթե բոլոր ժամանակներին բնորոշ) անձնական ու հասարակական կյանքի վտանգները (Մատթ. Ե. 41, Հռոմ. Զ. 4), անձնային ու միջանձնային, սոցիալական հարաբերությունները, հիշյալ հարաբերությունների սրբագրման ու վերափոխման անհրաժեշտությունը (Գաղ. Գ. 26, Մատթ. ԻԸ. 19), ինչպես նաեւ այն, որ Աստծո եւ մարդու միջեւ գոյություն ունի հայտնություն, պատմություն եւ հարաբերություն՝ հարկ է, որ (հենց) Եկեղեցին տեր եւ պաշտպան լինի մարդու անբեկանելի արժանապատվությանը (քանի որ իրականության մեջ այն միշտ էլ այնտեղ է եղել):

Ահավասիկ այսպիսի մտահոգություններով ու խոստումնալից հեռանկարներով 2014թ. սկզբներին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ կյանքի կոչվեց Մայր Աթոռի Սոցիալական ծառայության կենտրոնը, որի անհրաժեշտությունը վաղուց արդեն հասունացել էր: Կենտրոնի ծիրում են Երեւանի, Էջմիածնի եւ Վանաձորի հինգ բարեգործական ճաշարանները, Նագաշյան՝ մանուկների խնամքի, կրթության եւ աջակցության կենտրոնը, Գարեգին Բ. տնաշինական ծրագիրը եւ Օգնությունների գրասենյակը: Կենտրոնն ունի իր կանոնադրությունն ու խորհուրդը, հավատամքը «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես եւ դու՛ք արեք նրանց, որովհետեւ ա՛յդ իսկ են Օրենքն ու մարգարեները...» (Մատթ. Է. 12) ու որդեգրած սկզբունքը՝ աջակցել ամենից կարիքավորին եւ ամեն օր նվազագույնը՝ մեկ ընտանիքի: Կենտրոնի աշխատանքներն էլ ավելի արդյունավետ իրագործելու նպատակով շուտով կհամալրվի նաեւ բարեկամների խորհուրդի կազմը, որտեղ ընդգրկվելու են անձինք պետական ու ոչ պետական տարբեր հաստատություններից եւ ՀԿ-ներից: Կենտրոնն իր հիմնական

աշխատանքները ծավալում է երկու՝ նյութական (դրամական եւ իրային) եւ հոգեւոր-բարոյական (խնամատարություն, առողջապահություն, ընկերային ու աղոթական կյանքի ընդլայնում հնարավոր բոլոր մակարդակներով) ուղղություններով: Այս սկզբունքներով պայմանավորված եւ անընդհատ ավելին անելու գիտակցությամբ՝ ծառայության Օգնությունների գրասենյակն ընթացիկ տարում նյութական (մոտ 80 մլն. ՀՀ դրամի սահմաններում) ու հոգեւոր-բարոյական (աղոթքով ուղեկցվող բազմակի այցելություններ) աջակցություն է ցուցաբերել նվազագույնը 25000 անձի ավելի քան 700 ընտանիքներից (ի թիվս որոնց՝ սիրիահայեր ու տեղահանվածներ այլ վայրերից, անօթեւաններ, զինվորների ու ազատամարտիկների ընտանիքներ, հիվանդներ, վատառողջներ ու հաշմանդամներ, միայնակ մայրեր, ծերեր ու երեխաներ, ուսուցիչներ ու ուսանողներ, բազմանդամ ու բազմազավակ ընտանիքներ, դատապարտյալների ընտանիքներ):

Հիշատակելի են ընթացիկ տարում իրականացված հետեւյալ ծրագրերը. դեռեւս 2013 թ. դեկտեմբերին Ս. Ծննդյան եւ Ամանորի տոնակատարությունների առիթով Վեհափառ Հայրապետի կողմից շուրջ 5 մլն. ՀՀ դրամ է հատկացվել Հայաստանում ապաստանած առավել կարիքավոր սիրիահայ 50 ընտանիքների (վերջիններիս տվյալները տրամադրվել են Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոնի կողմից): 2014 թ. հունվար-փետրվար ամիսներին Մայր Աթոռի երիտասարդ միաբանների եւ Քարոզչական կենտրոնի երիտասարդների ջանքերով իրականացվել են բազմակի այցելություններ, տնօրինեքներ ու նվիրատվություններ բազմանդամ կարիքավոր ընտանիքներին: Հունիս-հուլիս ամիսներին Արարատյան Հայրապետական թեմի հետ իրականացրել ենք «Մենք մեր զինվորների կողքին ենք» ծրագիրը՝ 50 միլիոն դրամ ընդհանուր գումարով: Հիշյալ գումարը բաշխվել է վերջին 10 տարիների ընթացքում թեմի տարածքից զոհված, հաշմանդամ, միաժամանակ երկու եւ ավելի զինծառայող ունեցող ընտանիքներին: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 15-րդ տարեդարձի առիթով «Աջակցություն կարիքավոր եւ անապահով ընտանիքների» ծրագրի շրջանակներում նոյեմբեր ամսվա ընթացքում միանվագ օգնություն է ցուցաբերվել Հայաստանում ապաստանած ավելի քան 150 սիրիահայ ընտանիքի, ինչպես նաեւ մոտ 70 առավել անապահով ու բազմազավակ ընտանիքների մարզերից՝ ուսանողների, հաշմանդամների եւ միայնակ մայրերի: «Պարգեւենք ուրախ ձմեռ» ծրագրի շրջանակներում դեկտեմբեր ամսին ԵՀԽ Կլոր սեղան միջազգային հիմնադրամի աջակցությամբ եւ Մայր Աթոռի Հայեցակարգային գրասենյակի եւ Արմավիրի թեմի սոցիալական գրասենյակի,

Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոնի եւ Սփյուռքի նախարարության համագործակցությամբ իրականացվել են այցելություններ հիվանդանոց, ծննդատուն, ինչպես նաեւ Սիրիայից եւ Ուկրաինայից ժամանած շուրջ 250 երեխաների, սահմանամերձ մի շարք գյուղերի ու շրջանների բնակիչների: Այցելություններն ուղեկցվել են աղոթքով, դրամաբաշխությամբ ու նվիրատվություններով:

2015 թ. մեկնարկել ենք «Պարգեւենք ուրախ ձմեռ» ծրագիրը՝ համագործակցաբար ԵՀԽ Կլոր սեղան միջազգային հիմնադրամի: Այս ծրագրի շրջանակում Մայր Աթոռի միաբանների, ինչպես նաեւ Քարոզչական կենտրոնի երիտասարդների օգնությամբ կատարվել են բազմակի այցելություններ եւ տնօրհնեքներ: Նյութական աջակցություն է ցուցաբերվել մանուկների տներին, հիվանդներին ու միայնակ ծերերին: Այսօրինակ այցելություններն ու խնամատարությունը հետայսու լինելու են կենտրոնի ծառայության հիմնական բաղադրատարրը: Փետրվարի 12-ին՝ Ս. Վարդանանց նահատակների հիշատակության օրը, որը նաեւ ազգիս Վեհափառի անվանակոչության օրն է, հռչակված է ազգային տուրքի՝ բարի գործի օր: Սոցիալական ծառայության կենտրոնը մեկնարկել է համաժամանակ չորս ծրագիր՝ աջակցություն 2014 թ. մարտական գործողությունների ընթացքում զոհված զինվորների ընտանիքներին, աջակցություն ՀՀ տարբեր թեմերի շուրջ 200 կարիքավոր ընտանիքների, գրատպություն, որի հասույթը կուղղվի ծառայության ծրագրերի առավել արդյունավետ իրականացմանը եւ դրամահավաք՝ աջակցելու համար Հայաստանում ապրող հիվանդ երեխաներին: Մարտ-հոկտեմբեր ժամանակահատվածում Մայր Աթոռի «Նագաշյան մանուկների տուն» երեխաների աջակցության կենտրոնի նախաձեռնությամբ եւ համագործակցությամբ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության, նախատեսում ենք իրականացնել վիկտորինա-մրցույթ՝ բարձրացնելու համար մանուկների աջակցության կենտրոնների երեխաների ուսումնակրթական մակարդակն ու ջերմացնելու վերջիններիս կենցաղավարությունը: Արդեն իսկ ունենք պայմանավորվածություն փետրվար ամսվա վերջին գործուն մասնակցություն բերելու ՀՀ պաշտպանության նախարարության եւ Հալեպահայության կենտրոնի ծրագրած ձեռնարկներին՝ ուղղված սահմանամերձ շրջանների բնակիչների եւ տեղահանվածների սոցիալական վիճակի բարելավմանը: Մարտ ամսին Կանանց միջազգային օրվա առիթով, համագործակցաբար եւ աջակցությամբ ՀԲԸՄ եւ ԵՀԽ Կլոր սեղանի, նախատեսում ենք կատարել նվիրատվություններ եւ այցելություններ մի շարք ծննդատներ: Բայց սա դեռ ամենը չէ: Ավելի քան վստահ ենք, որ տարվա ընթացքում անհրաժեշտ միջոց-

ների ամրագրման ու համապատասխան ներուժի ներգրավման պարագայում կլինեն նաեւ այլ նախաձեռնություններ՝ նպատակաուղղված թե՛ հանրային կյանքի բարելավմանը եւ թե՛ մասնավորապես Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին: 2015 թ. կենտրոնը հստակ նպատակադրված է պահելու եւ անգամ կրկնապատկելու արձանագրած ցուցանիշերը՝ առավել ընդլայնելով իր գործունեության շրջագիծը (մտահոգ ու համախոհ հաստատությունների ու անձերի), մանավանդ, երիտասարդների ներգրավում ամենատարբեր կառույցներից, Օգնությունների գրասենյակի գործունեության ընդլայնում, համակարգված համագործակցություն պետական (նախարարություններ, մարզային, քաղաքային ու այլ կառույցներ) ու ոչ պետական (խնամատարություն ու հասարակական գործունեություն իրականացնող ամենատարբեր կառույցների) համախոհների հետ. այցելությունների բազմապատկում անհրաժեշտ բոլոր ուղղություններով՝ ընտանիքներ, հիվանդանոցներ ու այլեւայլ բուժհաստատություններ, հնարավորության պարագայում՝ երեխաների աջակցության կամ անհրաժեշտ այլ կենտրոնների ստեղծում կիրառական, ինչպես նաեւ այլ խնդիրներ ունեցող երեխաների համար (ինչը համապատասխանաբար նոր միջոցներ ու զգալի ներդրում է ենթադրում: Եւ չնայած բոլոր հոգնություններին ու դժվարություններին՝ լիահույս ենք, որ աստվածային երաշխավորությամբ, որը Եկեղեցու սկզբունքորեն անօտարելի իրավունքն է, հնարավոր է լինելու փրկչական առաքելության տարածումը նաեւ ա՛յս բնագավառում: Խորապես համոզված ենք, որ Սոցիալական ծառայության կենտրոնի գործունեության ընդլայնումը մի կողմից՝ կարող է կանխել հանրության մեջ գոյավորվող ամենատարբեր աստիճանի ու մակարդակի բեւեռացումը, եւ մյուս կողմից՝ մեծապես նպաստել համակողմանի, ներդաշնակ ու համերաշխ գիտակցության ամրակայմանը քրիստոնեական բարձր ու անանց արժեքների վրա, ինչպես որ Քրիստոս է պատգամում. «Ով Աստծուց է, Աստծու խոսքերն է լսում...» (Հովհ. Ը. 47):

РЕЗЮМЕ

Общественная роль Армянской Церкви имело и имеет важную роль в истории Армянского народа. Данная статья анализирует вкратце историческое развитие некоторых ключевих понятий и реалий общественного служения Армянской Церкви. Основная часть исследования представляет анализ формирования Департамента общественной службы ААЦ, созданного в 2014 г., по благословению Католикоса всех армян Гарегина II-го.

SUMMARY

The Armenian Apostolic Church played a decisive role in the Armenian society over the centuries. The present article's aim is to present briefly some key notions and historical facts on the significant role of the Armenian Church for the formation of social-caritative services in the life of Armenian people. The main goal of the article is also to give a summary of the formation and foundation of the Department of social service in 2014, by the blessing and initiatives of H. H. Karekin II, Catholicos of All Armenians.